Կ Ա Ր Ծ Ի Ք

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՔԵՇԻՇՅԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը. 00.03. «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը տնտեսական աճի ապահովումն է, որը կարևոր նախապայման է հանդիսանում տնտեսական զարգացման, լրացուցիչ պետական եկամուտների գեներացման, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացման և մի շարք այլ տարաբնույթ խնդիրների լուծման համար: Այս տեսանկյունից, տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը, նախ և առաջ, ենթադրում է դրա վրա ազդող գործոնների համակողմանի ուսումնասիրություն: Վերջիններիս շարքում հատկապես առանձնահատուկ է գործազրկության մակարդակը, որի աճն ուղղակի բացասական ազդեցություն ունի տնտեսական աճի վրա: Հետևաբար, աշխատանքի շուկայի համակողմանի վերլուծությունը, զբաղվածության ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն ուղղված մոտեցումների մշակումը կարևորագույն նախապայմաններ են հանդիսանում երկրում տնտեսական աճի ապահովման համար: Ընդ որում, դրանց արդյունավետ լուծմամբ է մեծապես պայմանավորված երկրի տնտեսական զարգացումը և բնակչության կենսամակարդակի բարձրացումը:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է աշխատանքի շուկայում գործազրկությունը բնութագրող ցուցանիշների, ինչպես նաև այն կրճատող գործոնների համալիր վիճակագրական վերլուծության միջոցով տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության գնահատմանը, որով էլ

պայմանավորված է ընտրված թեմայի ***արդիականությունը*** և բարձրացված խնդիրների լուծման ***հրատապությունը***:

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացված է ատենախոսությունում բարձրացված հիմնահարցերի և դրանց հետ կապված խնդիրների լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման սկզբունքով: Նախաբանում հիմնավորված են հետազոտության արդիականությունը և ստացված արդյունքների գործնական ներդրման հրատապությունը, դրված է հետազոտության հստակ նպատակը և բացահայտված են դրան հասնելու հիմնական ուղիները:

Ատենախոսության ***առաջին գլուխը*** նվիրված է գործազրկության՝ որպես վիճակագրական հետազոտության օբյեկտի ուսումնասիրությանը, տնտեսական աճի տեսական հիմքերի և այն բնութագրող ցուցանիշների վերլուծությանը, գործազրկության մակարդակի և ՀՆԱ-ի աճի տեմպերի միջև եղած կապերի տեսական հիմնավորմանը:

Հետազոտության ***երկրորդ գլխում*** իրականացվել են գործազրկությունը բնութագրող հիմնական ցուցանիշների և ՀՀ մարզերում և Երևանում գործազրկության ցուցանիշների դինամիկայի ու դրանց կառուցվածքային տեղաշարժերի վիճակագրական վերլուծություններ:

Աշխատանքի ***երրորդ գլխում*** ուսումնասիրվել են տնտեսության հիմնական ոլորտներում գործազրկությունը կրճատող և տնտեսական աճը խթանող գործոնները, գնահատվել է տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցություն, ինչպես նաև գործազրկության մակարդակի և տնտեսական աճը բնութագրող հիմնական ցուցանիշների ներտարեկան համատեղ տատանումների ուսումնասիրության հիման վրա կատարվել են կանխատեսումներ:

Աշխատանքի կառուցվածքը հնարավորություն է տվել հեղինակին նախապես հիմնավորել ատենախոսության թեմայի ընտրությունը, այնուհետև բացահայտել դրված հիմնահարցերի լուծման հիմնական ուղղությունները և մշակել դրանց իրականացման մեթոդաբանական և մեթոդական հիմքերը:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է նրանով, որ աշխատանքում մշակված մոտեցումները հիմնված են դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրող հեղինակավոր մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվություն օգտագործվել են հիմնականում պաշտոնական և վիճակագրական նյութեր ու տվյալներ:

Աշխատանքի ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ բացահայտվել է գործազուրկների տարիքի և անավարտ գործազրկության տևողության միջև եղած փոխադարձ կապը և հիմնավորվել է դրանց համատեղ ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա, գնահատվել և կոռելյացիոն պլեյադաների միջոցով ներկայացվել է աշխատուժի առաջարկի և պահանջարկի հիմնական ցուցանիշների շղթայական ազդեցությունը գործազուրկների թվաքանակի և գործազրկության մակարդակի կրճատման և տնտեսական աճի վրա, գործազրկության մակարդակի և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածությունների բացահայտման արդյունքում վեր է հանվել գործազրկության պաշտոնական տվյալների միջև եղած տարբերությունների օրինաչափությունը, տնտեսական կայուն զարգացման գնահատման ինտեգրալ ցուցանիշի վրա գործազրկության մակարդակի և տնտեսական աճի դինամիկայի ազդեցության վերլուծության արդյունքում բացահայտվել է ՀՀ բնակչության բարեկեցության վրա նշված գործոնների ազդեցությունը, բացահայտվել է գործազրկության մակարդակի և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև եղած փոխկախվածության առանձնահատկությունները, ՀՆԱ-ի ծավալների և գործազրկության մակարդակի փոխկապակցված շարքերի վերլուծության հիման

վրա պարզաբանվել է սեզոնային տատանումների բնույթը, և ժամանակային շարքերի տարբեր բաղադրիչների հիման վրա տրվել են կանխատեսման միջակայքային գնահատականները առաջիկա տարիների համար:

Հետազոտության արդյունքները գիտության համար ներկայացնում են որոշակի արժեք: Աշխատանքում մշակված մոտեցումները, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Հեղինակի կողմից ստացված արդյունքները թույլ են տալիս համոզվելու, որ դրանց գիտագործնական կիրառության շրջանակները կլինեն բավականաչափ լայն և կնպաստեն հանրապետության տնտեսական վերելքին:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից:*** Դրանցից կարելի է նշել հետևյալները:

1. Ակնհայտորեն, երկրում առկա գործազրկության մակարդակն իր անդրադարձն է ունենում բնակչության սոցիալական վիճակը բնութագրող ցուցանիշների վրա: Գործազրկության սոցիալական հետևանքների գնահատման ժամանակ հեղինակի կողմից ներկայացված են վերջին տարիներին հանրապետությունում արձանագրված սոցիալական ցուցանիշները: Բարձր գնահատելով այդ ուղղությամբ հեղինակի վերլուծությունները, միաժամանակ, կարծում ենք, որ չի կարելի միանշանակ պնդել, որ այդ ամենը պայմանավորված է եղել գործազրկությամբ:
2. Հանրապետությունում ստվերային տնտեսության և թաքնված զբաղվածության մեծ ծավալներով պայմանավորված, կարծում ենք, որ աշխատանքի շուկայի կարգավորման ուղղությամբ առաջարկությունների և մոտեցումների մշակման ընթացքում պետք է առավելագույնս հաշվի առնվեր նշված հանգամանքը, քանի որ հակառակ պարագայում որոշակիորեն խեղաթյուրվում է տվյալ ոլորտի իրական պատկերը, հետևաբար նաև՝ նվազում կատարված առաջարկությունների արդյունավետությունը:

3. ՀՀ-ում բնակչության զբաղվածության ապահովմանն ուղղված քաղաքականությունը, չնայած պետական ֆինանսավորման որոշակի ծավալներին, անցած ժամանակահատվածում աչքի չի ընկել իր արդյունավետությամբ՝ որոշակիորեն նպաստելով պետական բյուջետից կատարված հատկացումների փոշիացմանը: Այս առումով, կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից առավել խորը ուսումնասիրության ենթարկեին պետական բյուջեից կատարվող հատկացումների և ակնկալվող արդյունքերի միջև որոշակի հարաբերակցության ապահովման հարցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են տնտեսական աճի վրա գործազրկության ազդեցությանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Գ. Քեշիշյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են ՀՀ համար խիստ կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակը բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել տնտեսական աճի ապահովմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության

բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Գ. Քեշիշյանի «Տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի ազդեցության տնտեսավիճակագրական վերլուծությունը ՀՀ օրինակով» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

17.07.2020թ.

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
պ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

17.07.2020թ.